ԶԼՄ-ների հարցերին նվիրված Հարավկովկասյան 11-րդ համաժողով

Հանրային հեռարձակումը թվային դարաշրջանում

10-11 նոյեմբերի 2014 թ., Թբիլիսի, Վրաստան

Հանձնարարականներ

Սույն փաստաթուղթն ամփոփում է Մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի գրասենյակի կողմից 2014 թ. նոյեմբերի 10-ից 11-ը Թբիլիսում կազմակերպված Հարավկովկասյան 11-րդ մեդիա-համաժողովի ժամանակ Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի ավելի քան 70 լրագրողների, կառավարության ներկայացուցիչների, քաղաքացիական հասարակության, գիտական հանրության, ինչպես նաև միջազգային փորձագետների և Ուկրաինայի, Ղրղզստանի, Մոլդովայի և Ղազախստանի մասնակիցների միջև տեղի ունեցած քննարկման ընթացքում հնչեցված հանձնարարականները:

Համաժողովը նվիրված էր նոր մեդիա-տեխնոլոգիաների համատեքստում հանրային հեռարձակման արժեքների, բովանդակության, ֆինանսավորման, կառավարման, կարգավորման և ղեկավարման քննարկմանը:

Համաժողովի մասնակիցները համաձայնեցին, որ.

- Հանրային հեռարձակողները պետք է ծառայեն քաղաքացիներին, այլ ոչ թե կառավարական կամ քաղաքական ուժերին, առևտրային կամ այլ շահերին:

- Հանրային հեռարձակողները իրենց գործողություններում միշտ պետք է առաջնորդվեն ճշգրտության, օբյեկտիվության, հավասարակշռության, հաշվետվողականության և խմբագրական անկախության սկզբունքներով:

- Հանրային հեռարձակողները պետք է անեն հնարավոր ամեն ինչ, որպեսզի բոլոր մեդիա-հարթակներում լինեն տեղեկատվության ամենապատշաճ ու վստահելի աղբյուրը:

- Հանրային հեռարձակողներն իրենց ծրագրերը պետք է տարածեն կապի և ցանցերի հնարավոր բոլոր միջոցներով (արբանյակային, համացանցային, կաբելային և ցամաքային)՝ լայն ծածկույթ ապահովելու համար:

- Հանրային հեռարձակողները պետք հեռարձակման բոլոր հարթակների միացումը թվայինին դիտեն որպես լրատվամիջոցների բազմակարծությունը ամրապնդելու նոր հնարավորություն:

- Կառավարությունները պետք է օրենսդրության և կանոնակարգերի մեջ ներառեն դրույթներ, որոնք կնպաստեն հանրային հեռարձակողների անցմանը թվայինին:

- Համացանցը և այլ հարթակները պետք է ոչ միայն ապահովեն հանրային հեռարձակողների ավանդական հաղորդումների մատչելիությունը, այլ նաև մատուցեն բովանդակային նոր ծառայություններ:

- Համացանցը և սոցիալական միջոցները պետք է հանրային հեռարձակողների կողմից օգտագործվեն լսարանի կարծիքը ստանալու և նրանց հետ բանավեճի ու երկխոսության մեջ մտնելու համար:

- Հանրային հեռարձակողները պետք է փորձեն գնահատել լսարանի կարիքներն ու գոհունակությունը՝ ուշադրություն դարձնելով հասարակության բոլոր հատվածներին:

- Հանրային հեռարձակողները պետք է մեծ կարևորություն տան սեփական արտադրության և տեղական բովանդակությանը, ինչպես նաև ծրագրերի բազմազանությանը սոցիալական բոլոր խմբերի համար, որպեսզի արտացոլեն իրենց լսարանի մշակութային, կրոնական և լեզվական բազմազանությունը:

- Բազմազգ և բազմալեզու երկրներում ծրագրերը պետք է պատրաստվեն մի քանի լեզուներով, և հանրային հեռարձակողները պետք է ունենան աշխատակիցների բազմազգությունն ապահովող քաղաքականություն:

- Երիտասարդ լսարանը հանրային հեռարձակման տիրույթում գրավելու և ներգրավելու համար պետք է պատրաստվեն առցանց տարածման հատուկ ծրագրեր:

- Հանրային հեռարձակողների ֆինանսավորումը պետք է լինի բավարար, երաշխավորված, թափանցիկ և միջնաժամկետ առումով կանխատեսելի և ապահովի անկախություն թե՛ քաղաքական, թե՛ առևտրային շահերից ու ճնշումներից:

- Հաշվի առնելով տեսալսողական լրատվամիջոցների թեժ մրցակցությունը՝ հանրային հեռարձակողները պետք է ուսումնասիրեն հանրային առավել լայն ծածկույթ ապահովող նոր տեխնոլոգիաները:

- Հանրային հեռարձակողների խորհուրդների և կարգավորող մարմինների անդամների նշանակման կամ ընտրության գործընթացը պետք է լինի թափանցիկ և արտացոլի հասարակության լայն շրջանակները:

- Հանրային հեռարձակողների կողմից խմբագրական և գործառնական որոշումների կայացման ամբողջականությունը պետք է պատշաճ կերպով պաշտպանված լինի:

- Հանրային հեռարձակողների բոլոր փաստաթղթերը, ծրագրային փաստաթղթերը, որոշումներն ու առաջարկությունները պետք է առցանց հասանելի լինեն հանրային վերահսկողության համար: Պետք է գործի հանրության հետ փոխգործակցության համակարգ: Այն պետք է ներառի ինքնակարգավորման արդյունավետ մեխանիզմ, այդ թվում՝ հեռարձակողի կառուցվածքում օմբուդսմեն կամ նմանատիպ կառույց, որը կկարողանա ստանալ բողոքներ, տրամադրել ճշգրտումներ ու առաջարկություններ և մեղմել կոնֆլիկտային իրավիճակները: